ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

LXVII

ԲԱՅԻ Ախալքալաքի ամբողջ գաւառից (պատմական Զաւախքից) որ գերազանցօրէն հայաբնակ է եւ սակայն Վրաստանի մէջ է առնուած, նոյն վիճակին է ենթարկուած հայկական հողերից նաեւ — ցարական սահմանադրութեանամով — Բորչալուի գաւառի մէկ մասը:

Այդ գաւառը իր սահմաններով մօտաւորապէս համապատասխանում է մեր պատմական Տաշիրքին, որ հին Հայաստանի Գուգարք նահանգի մէջ էր մտնում, հիւսիսային կողմից սահման ունենալով Վրաստանը: Նա տարածւում է Փոքր Կովկասի հիւսիսահայեաց լանջերին եւ գրաւում է Կուր գետի աջակողմեան վտակներից Խրամի հարաւային կամ աջակողմեան աւազանը: Խրամը իր կողմից եւս դէպի Կուր գետն է հոսեցնում մի շարք մեծ ու փոքր ջուրեր:

Դրանից ամենանշանաւորը Զորագետն է կամ Դերեսը: Նա էլ իր կարգին մի շարք մանր վտակներ է ընդունում: Զորագետը իր սկիզբը առնում է Փամբակում, Բզովտալի լեռներից, որոնք Ջրբաժան գիծն են կազմում Փամբակի, Լոռիի եւ Շիրակի միջեւ: Իր վերին հոսանքում այդ գետը կոչւում է Փամբակու ջուր: Հոսելով Լոռիի յայտնի ձորով, հիւսիսից-հարաւ ուղղութեամբ, Բորչալուի դաշտում Զորագետը խառնւում է Խրամի մէջ:

Խրամի միւս, դարձեալ աջակողմեան, նշանաւոր վտակն է Մոշաւեր, որ հոսում է արեւմուտքից-արեւելք ուղղութեամբ եւ հազիւ հասած Բորչալուի դաշտը, խառնւում է Խրամի մէջ: Այսպիսով Մոշաւերի ընթացքը զուգահեռ է Խրամի վերին հոսանքին: Երկուսի ակունքներն էլ գտնւում են Վրահայոց լեռների արեւմտեան սահմաններում, այսպէս կոչուած Խոնաւ լեռների արեւելեան լանջերին, որոնք կազմում են Ջրբաժան գիծը Տաշիրքի եւ Զաւախքի միջեւ:

Աշխարհագրական Տաշիրքի բնական սահմաններն են. արեւմուտքից՝ Զաւախքը, հարաւից՝ Փամբակը, արեւելքից՝ Լեռնային Ղազախը կամ Դիլիջան-Իջեւանի շրջանը (պատմական Զորափորը եւ Կողբոփորը), իսկ հիւսիսից՝ Վրաստանը:

Մակերեւոյթի կազմութեանը նայելով՝ Տաշիրքը մանրանկար պատկերն է Հայկական Բարձրաւանդակի: Նա ներկայացնում է բարձրադիր, ալեւտատան սարահարթ, որ հիւսիս-արեւմուտքից հարաւ-արեւելք ուղղութեամբ երթալով աստիճանաբար իջնում է, հասնելով Խրամի ձախ եզերքը, ուր արդէն հարթավայր է (Բորչալուի դաշտի մէկ մասը):

Այդ բնագաւառի հիւսիսային մասում, Բզովտալի եւ Վրահայոց լեռների միջեւ ընկած ընդարձակ հովտում է տարածւում Լոռիի սարահարթը: Նրա միջով է հոսում Զորագետի ձախակողմեան վտակ Զալալօղլուի-ջուրը (ռուսացուած կոչումով՝ Կամենեա):

Տաշիրքի լեռները ծածկուած են անտառներով եւ փարթամ արօտներով: Ձմեռը, մանաւանդ լեռներում, անցնում է շատ խիստ եւ տեւում է երկար: Կլիման այդտեղ շատ առողջարար է, իսկ դաշտային մասում, ընդհակառակը, տաք է եւ վատառողջ:

Լեռնային մասերում ժողովուրդի զլխաւոր զբաղումները անասնապահութիւնն է եւ նրա հետ կապուած անտեսութիւնները, յատկապէս պանրագործութիւնը: Մեղուաբուծութիւնը եւս այդտեղ բաւական տարածուած է: Թէեւ հացաբոյսերի մշակութեամբ էլ զբաղւում է ժողովուրդը, բայց դա գոհացուցիչ արդիւնք չէ տալիս, կլիմայական պատճառներով: Մեղուաբուծութիւնը եւ անասնաբուծութիւնն ու կաթնատնտեսութիւնը լաւ ապագայ ունին լեռնավայրերում: Այժմ իսկ՝ Լոռուայ